



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԱՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## **ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՏՕՆԸ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԵՐ ԹԵՍԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵԶ**

Կիրակի, 27 Մայիսը Ս. Հոգեգալստեան տօնն էր. այս տարի տօնը կը զուգադիպէր Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան տարեդարձին: Հետեւաբար, զոյգ տօները պատշաճ շուքով ու հանդիսաւորութեամբ նշուեցան մեր Թեմին մեջ:

Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան հոչակման 89-րդ տարեդարձին առթիւ, մեր բոլոր Եկեղեցիներէն ներս, յընթացս Ս. Պատարագին, տեղի ունեցաւ Հանրապետական մաղթանք:



Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մեջ, նախազահութեամբ եւ հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ Եկեղեցական հայրերու, հանդիսաւորապէս նշուեցաւ Հայաստանի անկախութեան տարեդարձը,

կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք եւ Եռագոյն դրօշակի օրինութեան սրտառուց արարողութիւն: Դրօշակի օրինութեան արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Հ.Ս.Ը.Ս.ի Պըրպէսի մասնաճիւղի արենոյշներն ու սկաուտները:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով անդրադարձաւ Մայիս 28-ի ոգիին եւ մեր ժողովուրդի մղած գոյութեան պայքարին, ինչպէս նաեւ Ս. Հոգեգալստեան տօնի խորհուրդին: Ս. Պատարագի աւարտին, ան նախազահեց Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի եւ 1918 թուականին Հայաստանի անկախութեան համար մղուած բոլոր միւս ճակատամարտներուն ընթացքին զոհուած քաջամարտիկներու, ինչպէս նաեւ Արցախի եւ նոր օրերու նահատակ բոլոր ազատամարտիկներու հոգւոց խաղաղութեան ի հանգիստ մատուցուած հոգեհանգստեան արարողութեան:

## **CELEBRATING THE FEAST OF PENTECOST AND ARMENIA'S INDEPENDENCE**

Sunday, May 27<sup>th</sup> was the Feast of Pentecost or the coming of the Holy Spirit. It was also the 89<sup>th</sup> anniversary of the independence of the first Republic of Armenia. During Divine Liturgy these two festivities were celebrated in our Prelacy churches.

At St. Mary's church in Glendale, the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of clergy members, presided over the religious ceremonies of the blessing of Armenia's flag and delivered an inspirational message reminding our faithful that our ancestors shed their blood in order to keep our Christian faith and defend our homeland.

The Prelate also reminded that on this same Sunday the Armenian Church celebrates the Feast of Pentecost, the day the Apostles were filled with the powers of the Holy Spirit.

At the end of the Divine Liturgy a memorial service was conducted for the souls of our martyrs who perished during the battles of independence in 1918 and in the struggles that followed to defend our Homeland.

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՀԳ. Վ.ԵՒ Ա. ՃԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄՐՅԱՆԱԿԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Ուրբաթ, 1 Յունիսի կեսօրէ առաջ ժամը 11-ին, Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Ազգ. Վահան Եւ Անուշ Շամլեան վարժարանի մրցանակաւոր 5 աշակերտներու այցելութիւնը, ընկերակցութեամբ իրենց ուսուցչուհիներուն: Անոնք անցեալ ամիսներուն Վարժարանը ներկայացուցած են Լոս Անդելըս գաւառի միջ-դպրոցական գիտական մրցումներուն՝ Los Angeles County Fair-ին, ապահովելով առաջատար դիրքեր եւ յատուկ մրցանակներ:

Աշակերտներն եին ճոն Ազիգեան, Կարեն Արագեան, Դաւիթ ճաւատեան, Գրիգոր Պոռնազեան եւ Զոլեթ Համամա, իսկ ընկերակիցներն եին վարժարանի փոխ տնօրենուհի՝ Տիկին Ռիթա Գաբրիելեան, գիտական բաժանմունքի վարիչ եւ գիտութեանց ուսուցչուհի Տիկին Լիտա Գեղրգեան:

Առաջնորդ Սրբազնը ողջունեց աշակերտներն ու բարձր գևահատեց անոնց



արձանագրած յաջողութիւնները, գիտութեանց մարզին մեջ միշ-վարժարանային մրցանքներուն: Իւրաքանչիւր աշակերտ բացատրութիւններ տուաւ իր կատարած ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ ուսումնական ծրագիրներուն մասին, իսկ Տիկին Գեղրդեան յաւելեալ լուսաբանութիւններ տուաւ աշխատանքներուն մասին:

Առաջնորդ Սրբազնը գնահատաքով արտայատուեցաւ նաեւ ուսուցիչներուն նուիրումին մասին, ի ինդիր մեր պատանի աշակերտներուն միտքերուն ու հոգիներուն կազմադրման, մաղթելով, որ այս աշակերտները նոյն նախանձախնդրութեամբ շարունակեն իրեւց աշխատանքը, պատիւ բերելով իրեւց ընտանիքներուն, վարժարանին ու մեր ժողովուրդին:

Առաջնորդ Սրբազնը բոլորին յանձնեց յուշանուերներ:

Յրաժեշտ տալէ առաջ, աշակերտներն ու ուսուցիչները ծանօթացան Ազգային Առաջնորդարանի նոր շենքի տարբեր բաժանմունքներուն:

## **PRELATE RECEIVES AWARD WINNING STUDENTS OF CHAMLIAN SCHOOL**

On the morning of Friday, June 1<sup>st</sup>, the Prelate received the visitation of 5 students from Vahan and Anoush Chamlian School accompanied by Vice Principal Mrs. Rita Kaprielian and science teacher Mrs. Lida Gevorkian.

The students, Colette Hamamah, Garen Arabian, David Javadian, Krikor Bornazian, and John Azizian, were among the representatives of Chamlian school at the Los Angeles County Fair and were awarded with prizes for their researches. The students reported to the Prelate details of their tasks and spoke of their scholarly plans.

The Prelate praised the success of the students and commended the efforts of the teachers, as well as acquainted them with the different departments of the new Prelacy headquarters.

## **ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ**

Եսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Եւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Սայր Տաճարի Կիրակնօրեայ դպրոցներու ամավերջի հանդեսները տեղի պիտի ունենան Կիրակի, 3 Յունիսին, Ս. Պատարագի աւարտին, յիշեալ Եկեղեցիներու սրահներուն մեջ:

Հանդեսները կը վայելեն Թեմիս բարեցան Առաջնորդ Սրբազն Յօր հովանաւորութիւնը:

Յաջորդող շաբաթներուն տեղի պիտի ունենան ծխական միւս շրջաններու Կիրակնօրեայ Եւ Ազգային վարժարաններու հանդեսները:

## **SUNDAY SCHOOL COMMENCEMENT CEREMONIES**

The Sunday Schools of Holy Cross Cathedral and Holy Martyrs Church will hold their graduation ceremonies on Sunday, June 3<sup>rd</sup>, in the halls of their respective churches.

The events are being held under the auspices of the Prelate. The rest of our Sunday Schools will hold their graduation ceremonies on forthcoming Sundays.

### **CASPS ԿԸ ԳՆԱՐԱՏԵ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՅԱԶՈՂԱԿ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ**

Հանրային Վարժարաններու հայ աշակերտներու դպրոցական կեանքին հետեւող Ազգ. Առաջնորդարանի յատուկ յանձնախումբը, որ կը կոչուի CASPS, ուսումնական տարեշրջանի աւարտի այս օրերուն կազմակերպած է երկու հանդիսութիւն. առաջինը նուիրուած էր Կլենտեյլի հանրային Վարժարաններէ շրջանաւարտ յաջողակ աշակերտներուն, եւ տեղի ունեցաւ Երեցաբթի, 29 Մայիսի Երեկոյեան, ժամը 5:30ին, Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր, Կլենտեյլի Pacific Community Center-ի սրահին մեջ, ներկայութեամբ հանրային Վարժարաններու տևորեններու եւ շրջանի կրթական մշակներուն ու պատասխանատուներուն:

Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ այս հանդիսութեան եւ շրջանաւարտներուն ուղղեց իր բարեմաղթութեանց ու օրինութեան խօսքը: Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիսութեան ներկայ էր նաեւ Ազգ. Վարչութեան փոխ-առենապետ Տոք. Յակոբ Տեր Մկրտիչեան:

Յայտնենք, որ այս տարի, 11-րդ տարին ըլլալով, CASPS-ը կը կազմակերպէր այս ձեռնարկը:

CASPS-ի Երկրորդ հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Չորեցաբթի, 6 Յունիսին, եւ նուիրուած է Լու Անձելըսի հանրային Վարժարաններու համակարգի Երկրորդ տեղամասի շրջանաւարտներուն:

### **CASPS HONORS ARMENIAN GRADUATES OF PUBLIC SCHOOLS**

Keeping up with years-long tradition, the Committee for Armenian Students in Public Schools (CASPS) has organized special ceremonies to honor Armenian graduates of public schools that have achieved high performance in their schools.

The first of these events took place on Tuesday, May 29, at Pacific Community Center in Glendale. The Prelate presided over the event and delivered his well wishes to the graduates. Also in attendance was Executive

Council Vice- Chair Dr. Hagop Der Megerdichian as well as Principals and educators from public schools.

CASPS will honor Armenian graduates from the Los Angeles School District on June 6<sup>th</sup>.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՆԱԽԱԳԱՐԵ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ**

Չաքաթ, Յունիս 9-ին, Թեմիս Առաջնորդ Սրբազնը պիտի այցելէ NCCF Wayside-ի բանտը, ուր Եկեղեցական արարողութիւն պիտի կատարուի եւ Ս. Յաղորդութիւն պիտի մատակարարուի հայ բանտարկեալներուն: Արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազնը պիտի փոխանցէ իր պատգամը եւ օրինութեան խօսքը:

Առաջնորդ Սրբազնին պիտի ընկերանան հոգեւոր հայրեր եւ Ազգ. Վարչութեան անդամներ: Յայտնենք, որ այս դասաւորումը կատարած է Բրշնի. Շաֆֆի Սարկաւագ Կարապետեան, որ խորհրդատուական աշխատանքներ կը տանի հայ բանտարկեալներուն հետ:

### **PRELATE TO PRESIDE OVER CEREMONY FOR ARMENIAN INMATES**

On Saturday, June 9<sup>th</sup>, the Prelate will visit the NCCF Wayside jail to preside over a special ceremony for Armenian inmates. His Eminence will be accompanied by Prelacy clergy members and representatives of the Executive Council.

At the end of the ceremony, the inmates will be offered Holy Communion.

## **ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՔԻՄՆԱՐԱՄԻ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ԶԱՅԼԱՐՃԱՒԾ**

Յայկական Ոսկրածուծի Քիմնարամի կազմակերպած տարեկան երկրորդ հանգանակային քայլարշաւը տեղի պիտի ունենայ Չաքաթ, Յունիս 9-ին, կ.ա. ժամը 9եւ 12, Glendale High School-ի մարզադաշտին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազն Յօր, Կլենտեյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. S. Վազգեն Զինյ. Աթմաճեան Ներկայ պիտի ըլլայ քայլարշաւին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազնին օրինութիւնները:

## **ARMENIAN BONE MARROW REGISTRY TO HOLD “WALK OF LIFE”**

The Armenian Bone Marrow Registry has planned its annual fundraising “Walk of Life” event for Saturday, June 9<sup>th</sup>, at the Glendale High School campus.

Rev. Fr. Vazken Atmajian of Glendale’s St. Mary’s Church will represent the Prelate at this event, which will start at 9 am.